

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ 2 ՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ		Համակ դրամ եղանակը որիկ հետևելու հետևանքով		Խմբագրության ուղղակի գրություն	
Պոլիարիոյ համար Տարեկան 12 ֆր.		ԽՍՀՄԻՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — ՎՍԻՆԱ (Պոլիարիո)		Եւ չեն որոշուի եւ յարմար դատարան-	
» Վեցամսեայ 6 ֆր.		Редация на ВѢСТНИКЪ		ները միայն կը հրատարակուին աւ-	
Արտասահմանի համար (Երկու քիւր միկ		»ИРАВУНКЪ«		րողը ունի կամ մասնակցի	
ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.		Rédaction du journal		»Մանուգնակ տղը 20 սանթիմ. երե-	
Ամերիկայի » 2.60 տղ. վեցամսեայ 1.50		„Iravounk“		խեն աւելի անգամներու համար 20 0/0	
ԿԱՆԻՆԻ ՎՃԱՐՆԵԼԻ		ВАРНА (България)		գնել կը լինի:	
		V A R N A (Bulgarie)			

ՀԻՆ ԵՐԳԸ

Երիտասարդ թուրքերու ամե-
նէն կորովամիտ ու զարգացած դէմ
քերէն Ահմէտ Րիզա՝ խալիֆայու
թեան երազանքէն չի կրնար բաժ-
նուիլ ու ժամանակի յառաջդիմա-
կան ոգիի հարուածներուն տակ
չատնց դիմկնացած յոյս մը կօ-
րօքէ՝ ու կօրօքէ՝ իր պատիկ Մէշ
վերթի մէջ ի հաշիւ պաշտելի գա-
հին, զոր Ալ Օսման կանուանէ և
որ մարդկութեան ճակատին աղտն
եղած է, դարերէ ի վեր կատար
եալ ցածու թեմաք:

Կրօնքը՝ զոր կը պաշտեն Ալ-
Օսմանի այդ երկանիկ զաւակները,
իր շատ մը գծերով հակասական
ու բարբարիկ, տուած ըլլալով ոչ
իսլամ անհատներու գոյքը յափշտա-
կելու, պատիւը բռնաբարելու եւ
ի հարկին զանոնք սրէ անցունելու
երկնառաք հրամանը (՝) հինգ եր-
կար դարերէ ի վեր իսկապէս ե-
ղած է պատուհաս մը աշխարհա-
գրական կարեւոր դիրքին վրայ,
զոր Օսմ. կայսրութիւնը բռնած
էր լայնօրէն Եւրոպական և Ասիա-
կան հողերու մէջ:

Ինչ պիտի ըլլայ ուրիշն խալի-
ֆայութիւնը, հիմնուած կրօնքի
այդ հիմնաքարին վրայ, ոչ ապաքէն
անոր գործադիր իշխանութիւնը,
մերթ թաղ ու մերթ շեշտուած,
Ուրեմն երբ Ահմէտ Րիզա Սուլ-
թանները՝ 300 միլիոն իսլամներու
խալիֆան տեսնելու երազը կը զը
գուէ ու կը պաշտէ աւելի քան
մոլեռանդ սօթթա մը, գործնակա-
նապէս ցոյց կուտայ թէ դէպի
նոյն իսկ, իր պաշտած Ալ Օսմանի
զահը բարեկամական ու է քաջ
առած չէ և ինք զարգացած մար-
դու մը կեղեւին տակ միւսնոյն
ինքնասպան միջբույն է, աւելի
վտանգաւոր ու դժբախտ:

Չը նայելով հպտակ ազգերու
կրած աղէտները, կրօնքի այդ ան
դրմարդկային վարդապետութեան

(*) Ահմէտ Րիզա հակառակը պնդել
ուզած ատեն, պատրաստ ենք մեր ը-
սածը ապացուցանող հաստատման ա-
ռաջ բերել իրենց կրօնադրքէն:
Մ. Յ.

երեսէն, մեք նոյն իսկ Ալ-Օսմա
նի վիժուկներուն գոյութեան տե-
սակէտով պիտի հաստատենք վնա-
սակարութիւնը որքան ծաղրելի
նոյնքան և աղէտաւոր խալիֆայու
թեանը:

Խալիֆայութիւնը սկիզբէն ի
վեր՝ նոյն իսկ պատմական նշանա-
ւոր դէպքերու ատեն իրեններուն
մէջ արծարծած է միմիայն կրօն-
քի սէրը. իր նշանաբանն ըրած է
«տիեի պիւր ուղուրն» և ոչ թէ
«միլլէթ ուղուրն»։ Եւ այդպէս
ընելու ալ հարկադրուած էր, քա-
նի որ անկա Աստուծոյ շուքն էր
երկրի վրայ: Երբէք ազգայնու-
թեան ոգին չը վառուեցաւ Սել-
ճուքներու սրտին մէջ: Մեռուց,
ղաղի ըլլալու համար, մեռաւ, շէ-
յիտ ըլլալու համար և երկու պա-
րագային մէջ ալ արդար իսլամնե-
րու համար պարարտուած երկին
քի հուրինները վայելելու ինքնախա-
յոյսը ունեցաւ: Եւ որովհետեւ
ինք շարունակ երկիրքով կը զբաղ-
ուէր, ժամանակ չունեցաւ երբէք
երկրի վրայ անցած դարձածին նը
կատմամբ զաղափար առնելու և
իր ընթացքն ալ յարմարեցնելու իր
դրացիներուն մեծ յառաջդիմու-
թեանը, այնպէս որ այդ վառաշոտ
կրօնամուրը օր մըն ալ բնքդինքը
կաղ գտու Եւրոպական ընդհանուր
ներդաշնակութեանը մէջ, որ շա-
տոնց ի վեր ուղադրութեամբ կը
դիտէր անոր կրօնային բարբարո-
սութիւնները:

Իր դրացիները հսկայ բայերով
յառաջացան. կեանքի պայմանե-
րը դիւրացնելու համար ամեն գի-
տական ձեռնարկ քաջալերեցին ու
սա մնաց միշտ երկնազաւառի հու-
րիններուն հետ ու երբէք չը մտա-
ծեց աշխարհի շէյթանական յա-
ռադիմութիւններէն օգտուելու
հարկին վրայ: Խալիֆայութիւնը,
որ էն մեծ ու էն առաջին լծակն
էր ժողովուրդին բարքը բարեփո-
խելու գործին մէջ, չէր կրնար ա-
ռանց հակասական երկուութեան
մը ծիծաղելիութեանը ենթարկու-
ելու, երկինքէն վար քաշել ժողո-
վուրդը և գործնական հոգի վրայ
դնել անոր ոտքը: Յետագիւտական
նահանջը՝ խալիֆային անխուսա-

փիլի պարտք էր եղած կրօնքի ու
ժողո:

Անկէ վերջ ամեն մարդ գիտէ
թէ ինչ՝ պատահեցաւ Ալ-Օսմա-
նի լայնածաւալ կայսրութեանը
մէջ: Սխաթեմութիւնն անդամա-
տութիւն: «Դուն կարող չես, կա-
ռավարելու, տուր այսինչին, տուր
այնինչին»: Եւ ահա այս անգամա-
տութիւն է, որ կը շարունակուի
դեռ մինչեւ այսօր, երբեմն արագ
ու երբեմն ալ դանդաղ:

Եթէ ժամանակը անցած չէ ու
կարմիր ոճիւրներ անոր պատմու-
թեան գծերը արեւնոտած չ'են ան-
սըրբելի կերպով, միակ փրկութիւ-
նը այդ խարխաւած նաւուն պէտք
էր փնտռել խալիֆայութեան ան-
ջատումին մէջ, ուր թերեւս կա-
րելիութիւն տրուէր, Սուլթաննե-
րուն, աննախապաշար կերպով ոչ
խաբհիկ կանգնել վրայ խորհելու և
ժողովուրդը տակաւ առ տակաւ
մտցնելու իրական կեանքի մէջ:

Հակառակ պարագային, խալի-
ֆան նմանօրինակ բարբարոս կրօն-
քի մը ազդեցութեան տակ, որչափ
աւելաւորն տրամադրութիւններով
օժտուած Սուլթան մը ըլլար, եր-
բէք չպիտի կրնար չեղծացնել
կրօնքի ազդեցութիւնը ու միշտ
անընդունակ պիտի ըլլար տիեզե-
րական ընդհանուր յառաջացումին:
Փողոցի շներն անգամ չպիտի կըր-
նար վերցնել ու այս կրօնական
թոհ ու բոհին մէջ միշտ առաջ
պիտի տարուէր անդամատութիւ-
նը, մինչեւ որ խանչէր սրտին
զարնէր ու սպաննէր լմնցնէր գո-
յութեան իրաւունք չունեցող այդ
հրէշ զանգուածը:

Ուրեմն երգեցէ՛ք՝ Ահմէտ Րի-
զա, խալիֆայութեան հին երգը:
Հոն է, եթէ՛ ոչ ձեր փրկութիւ-
նը, գոնէ մեր վրէժը:

Դեռ ոչ դեռ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ուաշինկթոն և իր ընկերները
18րդ դարու վերջին քառորդ շըր-
ջանին մէջն էր որ հիմնեցին Մի-
ացեալ Նահանգները անոր արագ
բնէ զարգացումն նպաստող օ-

րէնքներով: Մինչեւ յօտաւոր ան-
ցեալի մը մէջ շատ քիչ կը զբաղուէր
Նոր Աշխարհի այդ հասարակա-
պետութիւնով: Ու տակաւին ազ-
նուապետական նախապաշարունե-
րէն չը սրբուած Եւրոպայի հա-
մար՝ Եանքիները աշխատող ու ի-
րենք իրենց մէջ ամփոփուած դա-
սակարգ մըն էին: Սակայն քանի
մը տարիէ ի վեր նոր շրջան մը բա-
ցուեցաւ Միացեալ Նահանգներու
համար: Երջան մը ուր կ'երեւի
այդ երիտասարդ կառավարութիւ-
նը, գիտութեան, արուեստի, ար-
հեստի և դրամի գերագոյն կըրկ-
նակ ուժերովը օժտուած ու ազա-
տութեան, հաւասարութեան եւ
յառաջդիմութեան հիմնաւոր և իս-
կական սկզբունքը իրապէս իւրա-
ցուցած:

Ու այդ նոր շրջանը, որ Ամե-
րիկայի հեղինակութեան ընդար-
ձակումը կը ըլլայ, և բարոյական
մեծութիւնը կը շինէ հին աշխար-
հի միջազգային տիեզերավար շըր-
ջանակին մէջ, ստեղծած է Ուիլ-
իամ Մաքքինլի Նախագահը որ
քիչ օրէն պիտի սկսի իր պաշտօ-
նավարութեան երկրորդ շրջանը:

Մաքքինլի իր պաշտօնավարու-
թեան առաջին շրջանը զարգարեց
Սպանիո Ամերիկեան պատերազմով,
որ Եանքիներու պատմութեան մէջ
նշանաւոր էլ մը շինեց Գուպայի
Սպանիոյ ձեռքէն առնուելովը եւ
ծովակալ Տուէյի ու Մէյսուրի աշ-
խարհադրող յաղթանակներովը:
Այդ պատմական մեծ դէպքը նոր
աշխարհին մէկ գործնական բո-
ղոքն էր հին և ազնուապետական
Աշխարհին մէջ տակաւին գոյու-
թիւն ունեցող բռնակալ դրու-
թեան դէմ: Գուպա և Ֆիլիբին
թէեւ բաղձալի է որ կատարեալա-
պէս անկախ ըլլան, սակայն Ամե-
րիկեան դրօշին ներքեւ ալ գտնուե-
լով նորէն շատ նախանձելի և ան-
բաղդատելի կացութիւն մը կունեն-
նան քան Սպանիոյ տիրապետու-
թեան շրջանը:

Սպանիո Ամերիկեան մարտը Մի-
ացեալ Նահանգներու բազմակող-
մանի ուժաւորութիւնը յայտ բե-
րելով, միաժամանակ ստեղծեց այն
առիթը ուրկէ օգտուելով Մաք-
քինլի վարչութիւնը ծնունդ տը-

աւաւ արտաքին աշխարհավարութեան մը ուրոյն և անկախ ուղղութեամբ :

Մաքքիլիի՝ իր երկրորդ պաշտօնավարութեամբն ալ Եանքիներու պատմութեան փառաւոր էջ մը տալու խոստումը կրնէ, Նախագահական յայտարարութեամբ մը, ուր ցոյց կը տրուի թէ Ամերիկեան ուժերը ոչ միայն տրամադրելի պիտի ըլլան հայրենիքի մեծութեան և պահպանման, այլ միաժամանակ տառապեալներու ազատութեան, յառաջդիմութեան եւ մարդասիրութեան համար ալ, ինչպէս կերելի յետագայ յայտարարութեանն :

«Հայկական խնդիրը մեզ համար երկրորդ ֆուպայի հարց մը պիտի ըլլայ» :

Թէ Մաքքիլիի յայտարարութիւնը ինչ աստիճանի իրագործելի կրնայ ըլլալ ներկայ շրջանին մէջ, թողունք առ այժմ այդ : Սակայն ներկայ ընթացքով յայտնապէս կերելի թէ Ամերիկա տիեզերական ճակատագրին վրայ եթէ ոչ հիմայ գոնէ մօտ ապագային էն կարեւոր դերերէ մըն խաղալու սահմանուած է : Ու քսաներորդ դարը՝ թէ՛ գիտական եւ թէ՛ պատմական ահագին յիշադրելի մեծ ճակատագրի մը դառնալուն հաւանականութիւնը կայ, հոն Ամերիկա իր մեծ դերը պիտի ունենայ :

Խօսքերնիս Միացեալ Նահանգներու շուրջը դարձած ատեն կը մղուինք հակիրճ տեսութեամբ մըն ալ Ճաբոնը յիշատակել, որ Ամերիկայի չափ կըզբաղեցնէ բազալ քակրթութեան հարցը :

Ճաբոն գրեթէ ասկէ կէս դար առաջ շատ անշան տեղ մը ունէր Պետութեանց շարքին մէջ . ինչ-

պէս են ցարդ Ասիական շատ մը կառավարութիւններ : Սակայն Գորէյի մը խնդիրով ծագում առած Չին և Ճաբոն պատերազմը որոշապէս ցուցադրեց աշխարհի՝ Արեւմտեան քաղաքակրթութեան իսկական իւշացումը Ճաբոնի կողմէ կէս դարու շատ կարճ պատմական շրջանի մը մէջ :

Ճաբոնները՝ այդ փոքրահասակ մեծ սիրա մարդիկը հիմնապէս զրդեցին Երկնային մեծածաւալ երկիրը : Միեւնոյն կայսրութեան պատմութեան համար ալ՝ այդ Չին Ճաբոն պատերազմը նոր էջ մը բացաւ :

Այսօր Ճաբոն իրեն համար բացուած նոր շրջանին կը տեսնուի տիեզերքի մեծ պետութեանց շարքին մէջ կարեւոր տեղ մը բռնած : Իր կառավարական շրջանակները, բանակը և նաւատորմը հիմնապէս կազմակերպուած են Արեւմտեանի էն գնահատուած դրուժիւններով : Ահա այսպէս քսաներորդ դարուն ոկիւրին կերեւան երկու նոր առայ ու նորացեալ ուժեր, երկար ատեն ապրելու սահմանուած հին աշխարհի երկու կողմերը Արեւելք և Արեւմտք :

Ճաբոն ալ իր կարգին կոչուած է քսաներորդ դարու քաղաքական մեծ անցուդարձին կարեւոր դերակատար մը ըլլալու և ով գիտէ թէ ներկայ դարուն վերջերը տիեզերավար ուժերը Ամերիկա-Ճաբոն և մէկ կամ երկու Եւրոպական պետութիւններ չպիտի ըլլան :

«Սպանիոյ տիրապետութեան մէջ արեւը մարը չի մտնիր» : Այսպէս կը զրցուէր 16րդ դարուն երբ Սպանիոյ գահը իր գոթութեան գազաթնակէտին մէջ, տիեզերքի չորս կողմը անսահման տարածութեամբ իր դրօշին ներքեւ առած էր շատ մը ազգեր :

սիւր — Այո՛, — Ահ... ու ինչու չի գացիր : — Չէք գիտեր, Երեցեանին հետ երկու ժամ վիճաբանութիւն մը ունեցայ որ վարդապետ ըլլամ, եթէ զիս թողաւոր որ... ամուսնանամ : Վասնզի, ըսի, ամուսնանալը բնական բան մ'է : վարդապետներուն յանցանք ինչ է որ անկէ զրկուին : — Երեցեանը ինչ պատասխանեց թու այդ շատ իրաւացի դիտողութեանդ : — Անկարելի է այդ ըսալ :

Գերասիմութեան վարդապետութիւն ինչ ծայրայեղ փոփոխութիւն, կը մտածէի, հրաժեշտ առնելով Պ. Գալֆայիանէն որ խնդրեց ինձի որ իրեն հետ թղթակցիմ :

Պ. Նավարեան որ գրականութիւնը իրեն ասպարէզ ընտրած ժամանակ միտք գրեւ ի իրեն զէմեղած յարձակումներուն չի պատասխանել, անշուշտ միտքը դրած է նաեւ ստախոսութեան խորշիւ : Ինչ չա՛հ ուրիմն Պ. Նավարեան կրնար ունենալ «Արեւ. Մամուլ»ը, «Բիւզանդիոն»ը, «Արեւելք»ը Գալֆայիանի ներքաղցնելով ողորդու, հայերէ ահեղ յուսախաբութեան մը ենթարկելու, յանգեցնելով պարզ փափոքն մը :

Բանակը Եւրոպայի պատկառանք կազդէր, իսկ նաւատորմը անշաղթելի անուշով սարսափի տակ կը պահէր ծովերը :

Ահա այս էր Սպանիոյ անցեալը : Ընթանի մը հարիւր տարիներ առաջ : Այդ Սպանիան այսօր յարաճուն խռովութեանց պէսպէս տագնապներու ասպարէզ դարձած, նիւթական ու բարոյական ահագին անկումներ կրած գրեթէ գետնաքարշ կերերայ :

Սպանիա ալ թուրքիոյ մէկ նըմանը կրնանք համարել : Սպանիոյ ընթանի մը փարոզն է կաթոլիկ կրօնքին, Սպանիոյ թուրքի մը չափ յանձնապատասխան և բարբարոս է, Սպանիոյ Եւրոպայի էն մեղի ու ծոյն է : Մէկ քանի դարերու շրջանին մէջ միշտ նոյն պատճառներով կորսնցուցած է իր Ամերիկեան, Ովկէանեան և այլ ահագին տարածութեամբ գաղթականները, իր ամենէն վերջի կրած հարուածը եղաւ Ամերիկայի ապտակը ֆուպային վոնտուրը : Յի լիբինէն ելլելը :

Այդ տագնապալի շրջանին փափուկուն հետ կսկսին կուսակցական խուլ և յայտնի պայքարները : Կառավարութիւնը մէկ կողմէն, կղերականութիւնը միւս կողմէն երկիրը կը խառնակեն, որոնց հետ միացած հանրային աղբատութիւնն ու տգիտութիւնը այդ երկրին ներկայ դարուն ապագան կը մը թնցնեն զգալի կերպով : Թերեւս քսաներորդ դարուն հետ երեցող ապրելու կոչուած ուժերուն տեղի տալով կորսուելու սահմանուած երկիրներէն մին ալ Սպանիան ըլլայ :

Սոսիալ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԱՆԱԴԵՍ

Ազգային վարժարանին ի նպաստ կազմակերպուած պարահանդէսը ամենքնիս ալ գոհացնելու չափ յաջողեցաւ, պարահանդէսին կազմակերպիչները իսկ զարմացած կը թուին : չի մոռցուի թէ թաղ խորհրդարանականներէ ոմանք հեզու-

թեամբ կը պատասխանէին պարահանդէսը չ'տալնուն համար իրենց ուղղուած քննադատութեանց . անցած տարի ալ պարահանդէս տուեր են, դժբաղդապէս սակաւաթիւ ջաւեր հաճեր են պարասրահը իրենց ներկայութեամբը պատուելու : այս պատճառաւ տարակոյսներ յաջողութեան մասին :

Սակայն Հինգշաբթի գիշերուան պարահանդէսը ցոյց տուաւ թէ տեղացի հայուհիները կարծուածին չափ տարամբք չեն, շնորհալի սեռը ներկայացնող իրենք էին գլխաւորաբար : Խոստովանելու ենք թէ թաղական խորհուրդը, մոռնալով որբախնամին դէմ մղած անարդարանալի անյաջող պայքարը, ոչ մէկ ջանք ու փոյթ չէր խնայած պարասրահը ամեն կերպով անթերի ընելու համար : Թերեւս զարդարանք քիչ մը աւելի խնամքի կարօտ էր : բայց նկատելով պարահանդէսին «ընտանեկան հանգամանք»ը, կրնանք իրենց այդ փոքր անվտանգութիւնը արդարացնել, մանաւանդ որ նիւթական շահը հեռի է անգոհացուցիչ ըլլալէ : Ուրեմն թաղական խորհուրդը մեղադրելի է որ ահագին ձմրան մէջ գոնէ երկու պարահանդէսներ չի կրցաւ սարքել, վասնզի պէտք չէ մեր ուշադրութեան վրիպեցնենք թէ մեր պարահանդէսին տեղի ունեցած գիշերը, անդին Յոյները նուազահանդէս մը կուտային, երկու օր յետագայով իրենց պարահանդէսը : Մենք շատ աւելի պէտք ունինք նմանօրինակ նպատակներ քան յոյները, ու պէտք է որ տեղային կառավարութեան ընծայած դիւրութիւններէն — որ զինուորական նուազախումբը ձրիաբար մեր տրամադրութեան տակ դնելու ազնուամտութիւնը կուենայ — ջանք աւելի օգուտ քաղել, Գովիլի նախաձեռնութեամբ մը, թաղական խորհուրդը որոշած էր երկու պարգեւներ տալ երկու գե-

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՍԸ Կ. ԳԱԼՖԱՅԵԱՆԻ ՀԵՏ

—)(—

Նայեցէք, մարդ որ աստիճան... ըլլալու է որ Աստուծոյ գոյութիւնը ժխտէ. ալ ինչ կըսպասէք զԱստուծոյ ուրացողէ մը. անաստուծը աշխարհի մէջ ամեն բան կրնէ, ոճրագործութիւն ալ, գողութիւն... ալ : Աստուծոյ մարդու հոգիին աղամանդն է. զԱստուծոյ չի ճանչցողը խաւար լի է : (ու դեռ խել մը ոչնչաբանութիւններ արտաբերեց, զոր միտքս չեմ կրցած պահել) : Ա՛խ, չէք գիտեր, շարունակեց հետզհետէ բողբոջելով, այդ մարդիկ իրենց այդ ընթացքովը ինձ այնքան զղուանք պատճառեցին որ քիչ մնաց Երուսաղէմ կերթայի : — Ինչ, երեւսաղէմ կերթայի կ'որ, ինչ ընելու համար : Օթէլլո՞ խաղալու : — Ո՛չ, չէք գիտեր ախպար, վարդապետ ըլլալու համար Երուսաղէմ կերթայի կ'որ :

— Ինչ, ըսի ականջներուս չի կրնալ հաւատալով, վարդապետ՝ ըլլալու համար Երուսաղէմ պիտի երթայիք ը-

չէ երեւցած, պէտք է սրբազրէր ծան Պէտնարի յօղուածին այդ անցքը : Գալով «Տէյլի Նիւզէր»ի, «Թան»ի, «Պոստըն Ջայթունկ»ի, այդ թիւթերը կըրնան ծան Պէտնարի անունէն խորտած ըլլալ : Պ. Նավարեան պիտի կըրնար ըմբռնել թէ արուեստին ճշմարտապէս գերին եղող ողբերգու մը, որ Մուսէ Սիւլլին ալ կը գերադասէ երգեր, երբէք կարենար ստորնալով վանքի մը մէջ փակուելու, անխառն, անպատակ աղօթքներ մը թմրեցնելով միայն աղքատ ընտանիքի մը դիւրակեցուցութիւնը ապահովելով, մարդկութեան շատ աւելի մեծ, շատ աւելի իրական օգուտ մը մատուցած պիտի ըլլար : Գալով ծան Պէտնարի Աղամանը Մուսէ Սիւլլին, Շէքսպիրեան խաղերու մէջ գերադաս համարելուն : տարի մը առաջ երբ Մուսէ Սիւլլին Պոլիս այցելելով քանի մը ներկայացումներ տուաւ, ժամանակին Աղամանին մենախոսութեանց ներկայ գտնուող յոյներ, յոյն ըլլալով հանդերձ, կը յայտարարէին թէ Մուսէ Սիւլլին հեռի էր Աղամանին հաւասարելէ ու միակ առաւելութիւնը զոր այդ ֆրանսացի ողբերգուն Աղամանին վրայ կրնար ունենալ, իր թատերական շողորդուն հագուստներն էին :

S. ԷԼՄԱՍԵԱՆ

դեցկագոյն դիմակաւորներու : Պար
գեւորներ մին շահեցաւ ծաղկատի
դիմակաւորութի մը , որորդուհի
ծաղկեցեալաւորութի , Տիւն շաւր
քանի մը վեհաւորութի թեւին ներ-
քեւ բակէզէթի մը մէջ հրացան .
ուած թռչուններու տարմ մը , հը-
րացան մը , դրուատաքարներ զոր
ամենուն ցոյց կուտար շնորհալի
թէն , մինչեւ վերջը յամառելով սա-
կայն չ գիմակաւորուեալ . երկրորդ
պարգեւը ստացողը ծաղկավաճառ
մէր . ըսին թէ պարգեւը տաւի
անոր յղացած խորհուրդին համար
էր , որով ծաղկներու վաճառմամբ
գոյացած դրամական փոքրիկ շահ
մը վարժարանին ապահոված էր .
ծափելով հանդերձ հնարամիտ
ծաղկավաճառը , պարգեւը ստանա-
լու համար այսպիսի գեղեցիկ «տը-
րիւք» մը ընտրած ըլլալուն , անըմ
բռնելի է սակայն «չքեղագոյն
ծաղկեցեալաւորութի» դիմակաւոր
ներու խոստացուած պարգեւը վար-
ժարանին նպաստ հանուի մը տալ .
կը կարծենք թէ ուշադրութիւն
գրաւող դիմակաւորներ չէին պակ-
սեր . երկու համարին , համբանդ
Պոթուհիները , իրենց «քաւալիէ
ռով» ընկերակցուած , ոչ նուազ
արժանի էին պարգեւին . յիշատա-
կենք քաջն վարդանի , ճոկանա-
կիր հկեղեցականին , փետրաւոր
բարձրահասակ «առնաւոր»ին հետ
մասնաւորապէս թեւաւոր թիթեռ .
նիկը , սիրունկէկ ու խորհրդաւոր
դիմակաւորութի մը որ զարմանալի
առողանութեամբ ամեն լեզուով կը
խօսէր : Երկու «գատորի» ու մէկ
«լանթի» պարուեցան , «տիրիթէ-
ռ»ը դերէն հասկցող անձ մէր ,
չքեղ բան էր լսել անոր «ալէն»ի
ը : Պարգեւապէս չպիտի կրնանք
զինքը չմեղադրել իր անըմբռնելի
քմահաճոյքին համար , որով երկու

գատորիներն ալ կիսկատար վերջա-
ցուց . ակներեւ է որ գատորիին
գեղեցկագոյն մասը վերջին ֆիկիշն
է . շատ պարուհիներ պատրանք
ունեցան հրճուանքով ողջունելու
6րդ ֆիկիւտը . երկու անգամուն
ալ , Տիւնիթէօռին որոշումը , անու-
ղոք ու բիրտ , զիրենք յուսախաբ
թողուց : Տեղական պարերը , «հո-
րա»ները լաւ պարուեցան . համակ
րելի հա յապան և ուրիշ բանի մը
տեղացի հայուհիներ այդ առթիւ
ծափահարուեցան :

Տ. Է.

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀԱՆԴԵՍԸ

Սօֆիա 10 փետրուար

Վարդանանց օրը հանդիսաւոր
անցուցիւք , մանաւանդ այս տարի
հանդիսաւոր ժարերգութիւն և Պա-
տարագ եղաւ . յաւարտ եկեղեցւոյ
ալ հանդէս ի յիշատակ նոյն անձո-
ւանալի դիւցազանց . քիչ թէ շատ
բազմութիւն կար , սակայն բազ-
դատմամբ գաղթականութեան թու-
ոյն ոչինչ :

Աշակերտ—աշակերտութիւն երգե-
ցին երգեր , ըրին արտասանութիւն
ներ , շատ անուշ և շատ համով ,
գովիստի արժանի . խօսեցաւ և
Օրիորդ վարժուհին է . Գօնչիկիւ
եան լաւագոյնս ներկայացնելով
վարդանանց պատմութիւնը . խօսք
առաւ և առժամայ թաղ . խոր
հրդոյ և հոգաբարձութեան Ատենա
պետ Տիար Ս . Յովհաննէսեան :

Շնորհակալութիւն յայտնեց Օր .
վարժուհին որ առիթ տուաւ մեզ
ազգային անցեալ կեանքէն ամենա
նշանաւոր դէպք մը յիշել , որ
միշտ կ'ոգեւորէ զմեզ . «աւելորդ կը
սեպեմ , ըսաւ , ես ինքս ալ խօսք
աւելցնել , քանի որ Տր . Պէլլէր-
եան պէտք եղածը խօսեցաւ» շնոր
հակալութիւն յայտնեց ներկայից
որ հաճած էին իրենց ներկայու-
թեամբ յարգել Աղգալին սոյն տօ-
նը և հանդէսը և քաջալերել դպրո

ցականները , մաղթելով որ օրին
մէկն ալ սոյնպիսի հանդէսներ հա-
րենի հողին վրայ կատարէինք ,
խօսքը վերջացուց , որ քանի
կարճ այնչափ ալ մեծ եղաւ իւր
ազգեցութիւնը :

Տէրութիւն ալ խաչը ի ձեռին
պահպանելով մը փակեց հանդէսը
և ներկայք ցրուեցան լաւ ազգե-
ցութեան ներքեւ քանիցս գոհու-
նակութիւն յայտնելով Օր . վար-
ժուհիին :

Սակայն ես գոհ չ'մ Տ . Պէլլէր-
եանի հետ թէ ինչու արդեօք չենք
հասկնար տակաւին մեր վիճակ թէ
անհատապէս եւ թէ ազգայնօրէն .
և մտքի ու սրտի այս վիճակին
մէջ ալ ինչ լաւագոյն օրեր կրնանք
պատել , երբ չենք սիրեր ու չենք
յարգեր ինչ որ հայունն է , ինչ որ
ազգայինն է :

Թ . Բ .

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

—Պօթուհանէ քանի մը ազգա-
յինք մեզ նամակ մը գրելով խնդ-
րած էին որ Լեւոն Ժիժեանէ զգու-
շացնենք ուրիշ քաղաքներու ազ-
գայիններ : (Տե՛ս իրաւունք թիւ 3):

Կրկին Պօթուհանէն Ա . Խաչա-
տուր մեզ կը տեղակազրէ թէ Լ .
Ժիժեան նիւթական անախտանձե-
լի վիճակի մը մէջ իյնալով , Պ . Գ .
Թաշեանի միջոցաւ ճանապարհա-
ծախս հայթայթած ու իր ընտա-
նիքին քով , Պուլկարիա , երթալու
համար հոնկէ մեկնած է , առանց
ոչ մի այսպեանի ընթացքի մէջ
գտնուելու : Բայց Լ . Ժիժեան մեզ
կը գրէ թէ այժմ Պրախա կը գտ-
նուի , ինչու իր ընտանիքին քով
չէ գացած , որուն համար ալլոց
աշակցութեանը գիմած էր : Ահա
այս պարագան քիչ մը կը հակասէ
Ա . Խաչատուրի տուած տեղեկու-
թեանը :

—Տօպրիչէն թղթակցութիւն մը
կը տեղակացնէ թէ՛ անցեալ հինգ-
շաբթի Ս . Վարդանանց տօնին առ-

թիւ տեղւոյն հայ եկեղեցւոյն մէջ
պատշաճ կերպով ազգային հանդէս
մը կատարուած է , ամէն հասակէ
ու սեռէ ազգայնոց ներկայու-
թեան : Սակայն նամակագիրը ցաւ
կը յայտնէ թէ տարբեր յարանուա
նութենէ եղող հայու մը ինչու
արգիլուեցաւ բանախօսութիւն մը
նեկ օրուան ազգային մեծ տօնին
վերաբերեալ . տօն մը որ ամեն հա-
յու է :

—Կիրակի օր տեղի ունեցած
քուէարկութեամբ տեղւոյս Աղգա-
լին երկսեռ վարժարանի հոգաբար
ձու ընտրուեցան .

Տիար Փիլիպպոս Հալաճեան
« Ս'իհրան Զգօնեան
« Յարութիւն Հաճօրեան
« Յարութիւն Էնկիպարեան
« Գրիգոր Թօսպըլըքեան
Ուրախ ենք թէ ժողովուրդը ,
ըստ մեր յայտնած փափաքին , այս
անգամ բոլորովին նոր և երիտա-
սարդ ուժերէ կազմեց իր վարժա-
րանի հոգաբարձութիւնը :

Այս նորընտիրները ամեն տրա-
մադրութիւն ունին առ այժմ ոգի
ի բռին գործելու : Սակայն իրենց
պաշտօնավարութեան շրջանին մէջ
ցարդ անտեսուած բայց խիստ կա-
րեւոր ձեռնարկներ կան կատարու-
ելիք , որոնց իրագործման համար
դրսէն ուժերու աշակցութեան ևս
անհրաժեշտ պէտքը պիտ' ունենան
Ուստի փափաքելի որ նորընտիր
հոգաբարձութիւնը գիտնայ այդ
ուժերը իր շուրջը հաւաքել :

—Շնորհակալութեամբ ստացանք
Բաւնաւերի Բ . տարւոյ Գ . պրակը ,
որ ամբողջութեամբ նուիրուած է
Քետացւոց կայսրութեան պատմու-
թեանը , որուն ուսումնասիրութիւն
ընդ զրէթէ ցարդ մագուած էր
պատմաբաններէ :

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶՈՒՅՐ [52]

(ՊԱՏԿԵՐ ՄԸ ՏԱՃԱՆԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱՆ ԿԵԱՆՔԵՆ)

—Վսեմաշուք Տէ՛ր , ձեր պատուէրը մոռցուած
չէ , բայց տէրտէրն ուրիշ գիւղ մը գնացած էր ,
կեամբութիւններուն փառակալեա ըլլալուն իրենց գէնին
վերաբերեալ պալատի մը կատարելու : Վարժապետն
հիւանդ պառկած էր : Այս բանն ստուգելու պէս ,
խոնարհութիւն սեպեցի ձայն չի հանել . անոնք
երկուքն ալ միշտ քաղաք կուգան մօտիկ օրեր երբ
զան , ես զիրենք կը լրտեսեմ , ձերբակալելով բանտ
կը բերեմ , այս մասին ձեր ողորմածատեւութիւնը
վստահ թող լինի :

—Անանկ է նէ , աֆէրի՛մ գօլ պալի , դուն բաւա-
կան խելացի ու քաջ մարդ մը կերելիս : այդ յի-
մար կեամբութիւնները անշուք ճգմելու մէջ : ես քո
գործունէութեան շատ հաւանցայ , քեզի մուքեա-
ֆէթ (վարձատրութիւն) ու քո նմաններուն քաջա-
լերութիւն լինելու համար , քեզի խղիւղալիւրեան
(հարեւրապետի) աստիճանի կը բարձրացնեմ , շուտ
ինձի կանչէ փէրտէ չափուշին :

Գօլ պալիի ազդարարութեամբ , փէրտէ չափուշին
ներս կը մտնէ , գլուխ կուտայ ու ձեռնկապ կը
կայնի :

—Ոստիկանաց զննապետը ինձի կանչէ՛ , շուտ՝
մէկ երկու վայրկեան չանցած ժանտարմա ալայի
Պէլլին (զննապետ) առանց սուրի , իր կրկնօրը ա-
ղէկ մը կ'ոճկելով , ներս կը մտնէ . գլուխ կուտայ
կը կայնի :

Փաշայ էֆէնտին անոր բարեւը ընդունելէ ետք ,
տեղ ցոյց կուտայ , ալայի պէլին ծնկաչոք կը նս-
տի :

—Պէլլ էֆէնտին՝ , կրնէ փաշան , այս վայրկեա-
նէն սկսեալ ս'ա մեր քաջ Գօլպալին հարեւրապե-
տութեան աստիճանի պէտք է բարձրանայ , իր
բարեւոք ծառայութեան ու «ի գիտութեան» հա-
մար : Դուք այս խնդիրը տեղեկագրեցէք զապթիէ
նէզարէթին (ոստիկանութեան նախարարը) ես ալ
ներքին գործոց ու զինուորական նախարարութեանց
մագպաթայ (տեղեկագիր) կը խիկեմ , երա՛նի թէ ,
մեր բոլոր ուղղափառները . ասոր նման քաջ ու
խելացի ըլլային : Մենք շուտով մեր ծրագիրը կը
գործադրենք :

—Ձեր հրամանը գլխիս վրայ կը պատասխանէ
«ալայի պէլին» թէմէնով : առաջին գործս ատ պի
տի լինի , ասիկայ շատ լաւ մտածած էք . փաշայ
էֆէնտին , այդպիսով մենք մեր քաջերը , կեամբու-
ները ջախջախելու գործին մէջ քաջալերած կըլլանք
ու մեր վեհափառ Փատիշահի կամքը շուտով կ'իրա-
գործուի :

—Ծիչդ աս նպատակով , ես ալ որոշեցի այդ
բանը , դէ՛ , հայտէ՛ : Գօլպալի ալ դուն կրնաս
մէկնիլ , տունդ գնա՛ , հարեմիդ ու զաւակներդ
հետ մէկ քանի օր քէյֆ ըլլէ , այսօրուէն սկսեալ
հարեւրապետ ես դուն :

Գօլպալին երիցս գլուխ տալով կը մէկնի , բայց
իր սրտի մէջ վախ մը ունի թէ մի՛ գուցէ իր ըն-
կերները անոր այդ սին յովոգութեանէն նախանձե-
լով , իրողութիւնը երեւան հանեն , ու թրքական
քառահաճ կատակերգութեան ծուէնաւոր վարագոյրը
պատանէ :

Գօլ պալին Փաշայի դիւանէն ելնելուն պէս իր

տունը կը դիմէ , ու իր խեղճուկ ու աղտոտ դռնէն
ոտք ներս դրածի պէս , կնիկ , եկու՛ր այսօր աղէկ
քէյֆ մ'ընենք , կեամբութիւններու երեսէն բախտս բա-
ցուեցաւ : Ամենէն առաջ , ալլահն այս հայերը ան-
պակաս ընէ , եթէ անոնք չ'ըլլային , ոչ՛ փաշան
եւ ոչ՛ ալայի պէլին , ինձի արժէք կուտային :
Կնիկ , հայերու պատճառով ես իզպաշի եղա՛յ այ-
սօր : Բայց տեսնե՛ք եթէ , մարտեցինք նէ , շատ
լաւ : Ու Գօլպալիութեանէն՝ խղիւղալիւրեան
բարձրացած Մուսաֆայ էֆէնտին , չաբաթ մ'ամ-
բողջ Ֆատրմայ հանլմի հետ , կը թաղուին Մէհմէ-
տի դրախտի խօլ խախճանութեանց մէջ :

Շաբաթ մը վերջ , Մատաֆայ էֆէնտին , հարեւ-
րապետութեան խախճանութեանէն , ու հարէմի
տեփոտ պրկումներէն յափրացած , հրէշի մը կատա-
րեալիկ գիմագծով , անէն դուրս կ'եզայ շուկայէն
անցած ատեն . Տէր Վտհան ու Դուրգէնը կը տես-
նէ : Կեղծաւորութեամբ մ'անհնց կը մօտիկնայ , քէ
ֆէրին կը հօրցնէ , ու անուղղակի կը ստուգէ որ
անոնք դեռ մէկ քանի ժամ գործով քաջաք պիտի
անցունեն , ժամանակ չի կորսնցնէր «սէրան» կեւնէ ,
երեք զապթիէ կը խրկէ ու երկուք մէկտեղ ձերբա-
կալելով , ուղղակի ոճրագործներուն բանտէ՛կը զրկէ :
Ու յետոյ աս բանը փաշային կ'իմացնէ :

Գ . Գ . Նախապետեան
(Շարունակելի)

Վեհափառ Հայրապետը Բարիպի հոգեւոր հովիւ Սուքիաս վարդ. Պարոնեանի լանջախաչ, և Շուս. լույի Տէր Յովհան քհնյ. Մանգա. կունիի Աւագութեան աստիճան շնորհած է:

—Շահին՝ Հայոց ի նպաստ շնոր հած ֆէրմանը այս օրերս պաշտօ. նապէս ալ կնքուեր է Սատրապա. մին և Մուշիր Տէօվլէին (Արտա. քին գործերու նախարար) կողմէ: Արդ յառաջիկայ մարտ 9ին Նէվ. ռուղի տօնին թէհրան պիտի գու. մարուի Պարսկահայերու պատգա. մաւորական ընդհանուր ժողովը, ամեն թեմերէ զրկուած ներկայա. ցուցիչներով, որոնց թիւը 18 պի. տի ըլլայ: Այդ ժողովը չիթական կանոնադրութիւն մը պիտի պատ. րաստէ և միեւնոյն ատեն պիտի որոշէ բացուելիք առաջին կնքու. նական վարժարանին և մնայուն Թանճնաժողովին վայրը:

—Թիֆլիզի առաջնակարգ վա. ճառականներէն Պ. Գ. Բայա՝ տուր եանց խոստացած է տարեկան 2000 ռուբլի նուիրել Ալէքսանդրա. բօլ բացուելիք նոր առեւտրական վարժարանին մինչեւ իր մահը, ուրկէց վերջն ալ 200,000 ռուբլիի կտակ մը ձգել նոյն քաղաքին:

—Պոլսոյ Բերայի մէջ աղջկանց արհեստանոցը վերաբացուած է և վարչութիւնը յանձնուած է Օր. Տիրուհի Թորոսեանի:

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՈՒԹԻԳԻՅԷ

ԹԻԻՐԻՍԻԱ

Ատանպօլտան Սօֆիա Թարիզի իւլէ վրոփայա վերիւն պիւ թէ. լեկրաֆա նազարէն, պիւթիւն տիւ. վէլը մուզգաւա տէվայիւրի սիյա. սիլէրինտէ պախուսուս Աւստրիատա պէօյիւճէք ռահաթսըլըք հիւքմ իթմէքտէ իմիշ: Պու էնտիլէնին սէպէպի իսէ Մուկեդոնիանըն հա. լը հազըրը վէ գօմիթէլէրին մահա լի էհալի թարաֆընաան հիւսնիւ գապուլ օլընտըլարը օլուպ եագը. նէն պէօյիւճէք պիւր վէլվէլէնին զուհուրըտա գապիէն մէհուգ կէօ. րիւնմէքտէ իմիշ:

—Ապանիալըլարըն օթօնօմի թալէպի վէ թէհտիլէրի քէզա քլօրօքա գապիլէլէրինի տիւլիւն. տիւրմէքտէ օլտուղը »ԹԱՆ« եազը. յօր:

—«Բօլիթիքէ Գօրէնթօնտանս» կազէթասընըն պէյանընա նազա. րէն հիւքիւմէթ 300,000 իրալըգ պիւր իսթիգրազ տահա իթմէք ի. չիւն Օթօման պանգասը իլէ միւ. զաքքէրէտէ պուլընըյօր իմիշ:

—Սթամպօլտա եվմիյէ պիւր գաշ եիւզ պին օգկա էքմէք չըգարըր իւշ պէօյիւք ֆապրիգա իմալ օլը նաճագ: Դիւալաթ իչիւն լազըմ օ. լան էշեա վէ բլանլար հազըրլանմըշ տըր:

Սէլանիկ վիլայէթինտէ Կէյվէլի նամ մահալէ եագըն Պուլկար չէ թէլէրի իլէ թիւրք ասկէրլէրի պէյ նինտէ զայէթ գանլը պիւր միւսա տէմէ վուգու պուլարագ Պուլկար արտան 6 քիշի թէլէթ օլմուշ վէ 3 քիշի տէրտէսթ օլընմըշ տըր: Թիւրքլէրտէն 4 ասկէր էօլմիւշ վէ 9 քիշի տէ եարալանմըշ տըր:

ՀԱՊԵՇԻՍՏԱՆ

Հապէշիտանտա խըրիսթիյան վէ իսլամլար պէյնիւտէ վուգու պու. լան գանլը պիւր միւսատէմէտէ 7000 քիշի թէլէթ օլմուշ տըր: Թէ լէթ օլանլարտէ տէօրթտէ իւշիւ իս. լամ իմիշլէր:

ՇՈՒԷՏ—ՆՈՐՎԵԳԻԱ

Շուէտ պինպաշըլարընտան Մ. Օնթ նամ զաթ հալսի պիւր թօր. փիլ իճատ իթմիշ տիւր: Պու թօր. փիլ թօփ իլէ աթըլարը վագըթ հիշ պիւր թէհլիքէսի օլմաուղըն. տան մաատա 4000 մէթրօլըք եէր կիտէպիլիյօր իմիշ:

ԹՐԱՆՍՎԱՆԱ

Տըրպէնտէն վերիւն պիւր թէլէկ. րաֆ յէնէրալ Ֆրէնչիւն կէշէն հաֆ թա էրմէլտա Պօէր օրտուկեհաճը. նա հիւճիւմ իթտիկինի վէ անլէր. տէն 40 քիշի գատար թէլէթ վէ 200 քիշի տէ էսիւր իթտիկինի պիւրիւրիյօր:

—Պօէրլէր Պէլֆասթտա իքիշը. մէնտըքէր գաթարը զապթ իթ. միշլէր:

—Ինկիլթէրա միւթմէլիքեաթ նազըրը Մր. Չէմպլէն հիւքիւմէթ մուհարէպէյի նէհայէթինէ գատար տէվամ իտէճէկինի պէյան իթմիշ տիւր:

—Լօրտ Գիւնէր Բրէթօրիա. տան վերտիկի թէլէկրաֆիլարա Պօ. էրլէր վէ ինկիլիզլէր պէյնիւտէ զա. յէթ շիտտէթի վէ գանլը մուհա. րէպէլէր վուգու պուլմագտա օլտը. զը վէ միւտարըպէլէրտէ Պօէրլէր ինկիլիզլէր էլինտէն բէք չօք էսիւր լէր կէրի ալտըզլարը կիպի, ին. կիլիզլէրտէ Պօէր յէնէրալարըն. տան Սթըյալը թէլէթ իթտիկիւրի վէ Ռանտէլէրի աղըրճա եարալա. մըշ օլտուղարը վէ պիւր գաշ մի. լալայ ու զապըթան տիւլիւրտիկ. լէրի պիւրիւրմիշ տիւր:

—Ենէրալ Տէվէդին օրտուսընտա շիքայէթլէր չօղալմագտա օլտուղը վէ եէլէճէքտէն զիյատէճէ քըզըլ տըզլարը թէլէկրաֆ հալմաթիլէ. րիւտէնտիւր: Օռանթ ըէիսի ճուլ հուրը Շթայն Տէվէդիէ պէրապէր պուլուուպա տիւնէթէր կիպի հարալ լարտա հազըր պուլուուպագտա ի. միշ:

—Ճէնուպի Աֆրիգատաքի ու. մուլ ինկիլիզ միւթմէլիքեաթլա. րընտա իտարէի էօրֆիյէ իլան օ. լընմըշ տըր:

—Ինկիլիզլէր Պօէրլէրտէն 65 վակոն վէ 45 էսիւր ալտըզլարը Լօնտրատան պիւր թէլէկրաֆ պիւ. տիւրմէքտէ տիւր:

ՉԻՆ

Շան Հայքուանտան վերիւն պիւր թէլէկրաֆա նազարէն, Գօաչիայա եագըն Բուսլար վէ 2ինիլէր պէյ նինտէ պիւր միւտարէպէ վուգու պուլուպ Բուսլարտան 42 քիշի թէ լէթ օլմուշ տըր: Բուսլար ասաքի ըի էճնէպիլէ թարաֆնտան մու. վէնէթի ըէտտ իթմիշլէր:

Բէքինտէ եաղմա էլան տէվամ իթմէքտէ տիւր, էճնէպի ասկէրլէ. րի պիւր պիւրլէրինէ ըէպապէթ ի տէրճէսինէ մտպէտլէրի (մեհեան) սօյմագտա վէ փոշլարը (կոււք) մէզատ իթմէքտէ տիւրլէր: Ճարն լըլար ալթը մապէտտէն 21 առապա էշեա զապթ իթմիշլէր, մապէտլէ. րին թէքմիլ տուվարլարը սէօքիւլ մէքտէ քիւրէմիլլէրէ վարընճա զապթ օլընուպ սաթըլմագտա տըր:

ՍՊԱՆԻԱ

Գարընըլըք Իհիայէթ տէրէճէյէ վարմըշ տըր: Փայլթաթտա վէ մէշհուր շէհրլէրին էքսէրիսինտէ իտարէի էօրֆիյէ իլան օլընմըշ տըր: Հալը հազըրըն բէք թէհլի բէլի կէօրիւնտիկի էվրոփա կազէ թալարը պիւրիւրմէքտէ տիւրլէր:

ՍԵՐԳԻԱ

Միւթմէլէֆա Գրալ Միլանըն էվրազը զաթիյսի պէյնիւտէ «Պալքան իթթիֆագը» սէրլէվհա սը իլէ էհէմիլլէթի պիւր թահրի ըալթ զուհուր իթմիշ տիւր:

—Գրալ Միլանըն զիքրի նամը նա պիւր հէյքէլ ըէք իթմէք ի. չիւն ումուլ Սիգպրտա իա նէ թօփլանմագտա տըր:

—Գրալ Միլան հիւնի վէֆա. թընտա աւա վարիտաթ պրագմա տըզը կիպի պօրճըտա չըգմամըշ տըր:

ԱՄԵՐԻԿԱ

Նիւ Եօրքտան վերիւն պիւր թէ լէկրաֆ Նիւ Եօրք լիմանըն տօնտուղըն վէ 200 գատար վա. բօր պուզլար արասընտա գալտըգ լարը պիւրիւրիյօր:

ՀԻՆՏԻՍՏԱՆ

Պօմպէյտէն վերիւն պիւր թէ լէկրաֆ շէհրը մէլքըլուրտէ եումուր ճաք հասթալըղը թէքրար պաշա. մըշ օլտուղը վէ պիւր գաշ կիւն զարֆընտա 2000 քիշի թուլու. լուպ թէլէթ օլտուզլարը պիւրիւրի. յօր:

ԿԻՐԻՏ

Շիմտիլիք ատտա պուլուուան էճնէպի ասկէրլէրի եէրինէ եուան ասկէրլէրի վազ իթմէք մէսէլէսի ինկիլթէրա, Բուսիա, Ֆրանսա վէ իթալիա տէօվլէթլէրի պէյնին տէ միւզաքէրէ օլընմագտա օլտըղը «Թան»ըն պէյանաթընտան տըր:

ՏԱԽԻԼԻԷ

Վէլի ահտ Բուէնս Պօրիսին հաա

Թալըղը էլան տէվամ իթմէքտէ օ. լուպ, Սօֆիա պէօյիւք քիլիսիսին տէ տուարար օգուսապ հէյլէթը վիւքէլա հազըր պուլընմըշ տըր:

ԱՐԱՊԻՍՏԱՆ

Ստանպօլ 10 փետր. Գօվաքտան վերիւն պիւր թէլէկրաֆ ումուլ մէմլէքէթին ալթիւսթ պուլընտը զընը պիւրիւրմէքտէ վէ Պէնի Բա շիտ արապ աշիւրէթլէրի իլէ ասի լէր պէյնիւտէ գանլը մուտարըպէ էր վուգու պուլմուշ օլտուղըն տա խի պէյան իտիյօր:

ՄԻՉՈՉԳՈՅԻՆ ՃԱՇԱՐԱՆ Պիլլիպար Տօնըգօֆ, Սօֆիա

Այս նորահաստա ճաշարանը որ «Էնթէնտսիօնալ» անունը կը կրէ, արեւելեան եւ տրեւմտեան ճաշակով ամեն տեսակ կերակուր կը պատրաստէ: Հոն մաքրութեան մեծ հոգ կը տարուի. գիներն ալ ուրիշ ճաշարաններու բաղադատ. մամբ աժան են:

ԹԻԻՋԱՐԻՅԷ

ՉՍԻՐԻԷ

ՊՈՒՂՏՈՅ		
Վակոն. 51/56 լի հէք.	7.80/8.80	
Արապա 50-58 լի հէթ.	8.10/10.80	
ԱՐԲԱ		
Վակոն 100 քիւ.	9.—/9.40	
Արապա 38-47 լի հէթ.	5.60/6.—	
ԵՈՒԼԱՅ արապա	4.—/4.60	
ՖԱՍՈՒԼԻԱ 100 օղա	22.—/28.—	
ՉԱՎՏԱՐ	7.60/8.40	
ՏԱՐԸ	5.60/6.20	
ՄԸՍԸՐ վակ. 56-57 լի.	6.—/6.—	
Արապա հէթ.	6.40/7.10	
Կիւնտէ 120/150 արապա կէլմէթ		
տիւր. վէ վակոն 20/25.		
Վակոն մուամէլէսի ալթուս ֆրանք. լէ, արապա կիւմիւլէ, նար.	22.90	

ԲՈՒՍԻԳ

Վարնա մաղաղալարընտա իւլիք ասթըլարը.		
Ինկիլիզ իւլիկի ն. 8/4	1.—	
» ն. 18/24	131.—	
Եէրլի իւլիք ն. 8/14	10.50	
Աթըլմըշ բամուզ հօգգա	2.20	

ՊԱԳՈՒԼԷ

Վարնա բիացաթընտա պազգալիէ մալլէրին պու կիւնքի ֆիլաթը, ալ. թուս ֆրանգ իլէ:	Ֆր. Սթր.	
ԳԱՀՎԷ	1.65/1.80	
Շէֆէր. —(Գէլէ) քիւ	—,59	
» (Գէլէ) ասնտըգ	31.—	
Բիւրիւն. —ճարն չու.		
վալը	42.—	
Բիւրիւն Ֆիլիպէ չուվալը	38.—	
Բիւրիւն —Ինկի.	38.—	
» բիզօն	52.—	
ԿԱՉ. — անտըգ	7.60	
Չէթօն ԵԱՂԸ. —քիւ	1.05/1.15	
Գարա իւզիւմ	—,42	

ՍԱՐԱՖԻԹԷ

Նարոլէն 22 ֆր. 75 սանթիմ. Օսմ. լիբասը 22.85 ֆր. ալթուս: Իփլիք ֆիլաթ տիւլմէն մէլիլի կէօ. րիւնիւր:

Էրմենիպարտուս էքսիլիք պէն տիւրիւն տէվամը ճուսաա էրթէ սի կիւնքիւ. նօմէրօլըտա կէօրիւ. լէճէք տիւր:

Отговорникъ Н. Драгулевъ

П. «Взаимность» Варна